



Կարգապահական գործ թիվ 20182

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի
2021թ-ի փետրվարի 02-ի թիվ 155-րդ ԿԳ նիստի

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ԹԻՎ ԿԳ/60-Ա**

**ՓԱՍՏԱԲԱՆ ԿՐՈՄՎԵԼ ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

ՀՀ փաստաբանների պալատի խորհուրդը (**այսուհետ նաև՝ խորհուրդ**), նիստը նախագահող՝ խորհրդի անդամ Կարապետ Աղաջանյանի, խորհրդի անդամներ՝ Հրանտ Անանյանի, Սիմոն Բաբայանի, Տիգրան Խուրշուդյանի, Հարություն Հարությունյանի, Արայիկ Ղազարյանի, Կարեն Մեժլումյանի, Կարեն Սարգսյանի և Արմեն Ֆերոյանի կազմով,

քարտուղարությամբ՝ Աստղիկ Գևորգյանի,
քննության առնելով փաստաբան Կրոմվել Գրիգորյանին (արտոնագիր՝ 305) կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը՝

Պ Ա Ր Ձ Ե Ց՝

1. Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքը.

Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Վ. Ստեփանյանը (**այսուհետ՝ նաև Դիմող**), դիմելով Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատ (**այսուհետ՝ նաև Պալատ**), հայտնել է հետևյալը.

Փաստաբան Կրոմվել Գրիգորյանը (**այսուհետ՝ նաև փաստաբան**), թիվ ԿԳ1/0047/01/19 քրեական գործով հանդիսանում է ամբաստանյալներ Աշոտ և Սամվել Մուշեղյանների պաշտպանը:

Փաստաբանը, պատշաճ ծանուցված լինելով վերջին 3 դատական նիստերի ժամանակի և վայրի մասին, չի ներկայացել դատական նիստերին և իր ներկայանալուն խոչընդոտող հարգելի պատճառների մասին գրավոր կամ բանավոր կերպով դատարանին չի տեղեկացրել:

Փաստաբանը չի ներկայացել 23.06.2020թ., 16.07.2020թ. և 25.08.2020թ. նշանակված դատական նիստերին:

Դիմողը խնդրել է արձագանքել փաստաբան Կրոմվել Գրիգորյանի դրսևորած նշյալ

վարքագծի վերաբերյալ:

2. Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը.

Պալատի նախագահի 07.10.2020թ. թիվ 359-Ա/ԿԳ-20182 որոշման հիման վրա՝ փաստաբան Կրոմվել Գրիգորյանի նկատմամբ հարուցվել է կարգապահական վարույթ՝ «Փաստաբանության մասին» օրենքի (**այսուհետ՝ նաև Օրենք**) 19-րդ հոդվածի 2-րդ կետի, ինչպես նաև Փաստաբանի վարքագծի Կանոնագրքի 4.1 կետի պահանջների խախտման հատկանիշներով:

12.10.2020թ. կարգապահական գործը հանձնվել է կարգապահական գործը նախապատրաստող անձ Գևորգ Մարտիրոսյանին (**այսուհետ նաև՝ Նախապատրաստող**):

3. Դիմողի և Պատասխանողների համառոտ բացատրությունները, վկաների ցուցմունքները.

3.1. Դիմողի համառոտ բացատրությունները.

Գործի նախապատրաստման ընթացքում Դիմողը բացատրություն չի ներկայացրել: Պալատի խորհրդի նիստին Դիմողը չի ներկայացել, թեև պատշաճ ծանուցված է եղել կարգապահական նիստի օրվա, վայրի և ժամի մասին:

3.2. Պատասխանողի համառոտ բացատրությունները.

22.09.2020 թվականին պալատ է մուտքագրվել (**մուտք՝ №-2026-20**) Կրոմվել Գրիգորյանի բացատրությունը, որում նշվել է հետևյալը.

Դիմումում նշված դատական նիստերի վերաբերյալ՝ Կրոմվել Գրիգորյանի կողմից Դիմողի v.stepanyan@court.am էլեկտրոնային փոստին 22.06.2020թ-ին, ժամը 11:38-ին, 16.07.2020թ-ին, ժամը 09:15-ին և 25.08.2020թ-ին, ժամը 11:51-ին նախապես ուղարկվել են գրություններ, ինչի մասին 14.09.2020թ-ին, ժամը 14:00-ին տեղի ունեցած դատական նիստի ժամանակ Կրոմվել Գրիգորյանը հայտնել է Դիմողին:

Նշյալ գրություններով Կրոմվել Գրիգորյանը խնդրել է հետաձգել դատական նիստերը, քանի որ դատական նիստերի դահլիճը չի ախտահանվում, և չի պահպանվում դատավարության մասնակիցների սոցիալական հեռավորությունը, իսկ իր վստահորդներից ամբաստանյալ Սամվել Մուշեղյանը 60 տարեկան է, որի հետևանքով վերջինս հանդիսանում է խոցելի խմբում ընդգրկված անձ:

Պալատի խորհրդի նիստին Պատասխանողը ներկայացել է և ըստ էության հաստատել է նախկինում ներկայացված դիրքորոշումը:

3.3. Վկաների ցուցմունքները.

Սույն կարգապահական գործով վկաներ չեն հրավիրվել:

4. Կարգապահական գործ նախապատրաստողի եզրակացությունը, եզրակացության վերաբերյալ առարկությունները և գործի հանձնումը խորհրդին.

Կարգապահական գործի նախապատրաստման արդյունքում Նախապատրաստողը 09.12.2020թ. կազմել է եզրակացություն:

Նախապատրաստողի եզրակացության վերաբերյալ Պատասխանողը ներկայացրել է առարկություն:

Կարգապահական գործը Խորհրդին է հանձնվել 14.12.2020թ-ին:

Խորհրդի նիստը տեղի է ունեցել 02.02.2020թ-ին, ժամը 18:30-ին, ՀՀ փաստաբանների պալատի վարչական շենքում (ք.Երևան, Զաքյան 7-2, 4-րդ հարկ, թիվ 12 սենյակ):

5. Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.

Պալատի ընդհանուր ժողովի կողմից 19.10.2019 թվականի թիվ 1-Լ որոշմամբ՝ նոր խմբագրությամբ հաստատված Փաստաբանի վարքագծի կանոնագրքի (**այսուհետ՝ Կանոնագիրք**) հավելվածը հանդիսացող «Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման» կարգի (**այսուհետ նաև՝ Կարգ**) 3.10.3 ենթակետի համաձայն՝ Պալատի խորհուրդը հիմք է ընդունում Նախապատրաստողի եզրակացությամբ հաստատված փաստերը, բացառությամբ այն դեպքի, երբ գործում գտնվող ապացույցները կամ Պալատի խորհրդին ներկայացված լրացուցիչ ապացույցները՝ սույն կարգին համապատասխան գնահատելու արդյունքում Պալատի խորհուրդն այլ եզրահանգման է գալիս:

Խորհուրդը, ուսումնասիրելով գործում առկա ապացույցները, հաշվի առնելով նաև կարգապահական գործը նախապատրաստողի եզրակացությունը, հաստատված է համարում հետևյալ փաստերը.

- Փաստաբանը հանդիսանում է թիվ ԿԴ1/0047/01/19 քրեական գործով ամբաստանյալներ Աշոտ և Սամվել Մուշեղյանների պաշտպանը: *Սույն փաստը հաստատվում է դիմումով, Փաստաբանի ներկայացրած առարկությամբ, Փաստաբանի կողմից v.stepanyan@court.am էլեկտրոնային փոստին 22.06.2020թ., 16.07.2020թ., և 25.08.2020 թվականին ուղարկված դատական նիստը հեղափոխելու մասին միջնորդությամբ:*

- Փաստաբանը պատշաճ ծանուցված է եղել թիվ ԿԴ1/0047/01/19 քրեական գործով **23.06.2020թ. ժամը 12:00-ին** նշանակված դատական նիստի մասին, որին չի ներկայացել: *Սույն փաստը հաստատվում է դիմումով, Փաստաբանի ներկայացրած առարկությամբ, դատական նիստերի արձանագրությամբ:*

- Փաստաբանը պատշաճ ծանուցված է եղել թիվ ԿԴ1/0047/01/19 քրեական գործով **16.07.2020թ. ժամը 15:00-ին** նշանակված դատական նիստի մասին, որին չի ներկայացել: *Սույն փաստը հաստատվում է դիմումով, Փաստաբանի ներկայացրած առարկությամբ, v.stepanyan@court.am էլեկտրոնային փոստին 16.07.2020թ., ժամը 09:15-ին ուղարկված դատական նիստը հեղափոխելու մասին միջնորդությամբ, դատական նիստի արձանագրությամբ:*

- Փաստաբանը պատշաճ ծանուցված է եղել թիվ ԿԴ1/0047/01/19 քրեական գործով

25.08.2020թ. ժամը 14:00-ին նշանակված դատական նիստի մասին, որին չի ներկայացել: *Սույն փաստը հաստատվում է դիմումով, Փաստաբանի ներկայացրած առարկությամբ, v.stepanyan@court.am էլեկտրոնային փոստին 16.07.2020թ., ժամը 09:15-ին ուղարկված դատական նիստը հետաձգելու մասին միջնորդությամբ, դատական նիստի արձանագրությամբ:*

- Փաստաբանը v.stepanyan@court.am էլեկտրոնային փոստին 22.06.2020թ.-ին, ժամը 11:38-ին, 16.07.2020թ.-ին, ժամը 09:15-ին և 25.08.2020թ.-ին, ժամը 11:51-ին նախապես ուղարկվել է միջնորդություններ 22.06.2020 թ.-ին, ժամը 12:00-ին, 16.07.2020թ.-ին, ժամը 15:00-ին և 25.08.2020թ.-ին, ժամը 14:00-ին նշանակված դատական նիստերը հետաձգելու վերաբերյալ: *Սույն փաստը հաստատվում է Փաստաբանի ներկայացրած առարկությամբ, Kromvel@list.ru էլեկտրոնային փոստից v.stepanyan@court.am էլեկտրոնային փոստին դատական նիստը հետաձգելու մասին միջնորդությունը ուղարկված լինելը հաստատող էլեկտրոնային փոստի լուսապատճենով:*

6. Պատասխանողի անձը բնութագրող հանգամանքները.

Պալատի ընդհանուր դեպարտամենտի ղեկավարի կողմից տրամադրված տեղեկանքի համաձայն՝ փաստաբան Կրոմվել Գրիգորյանը փաստաբանական գործունեության արտոնագիրը ստացել է 03.11.1997թ-ին, և 2015-2020թթ. ընկած ժամանակահատվածում վերջինիս նկատմամբ հարուցվել է 11 կարգապահական վարույթ, որոնցից 7-ը կարճվել է, 4 վարույթով Կրոմվել Գրիգորյանը ենթարկվել է կարգապահական պատասխանատվության, որոնք ուժի մեջ չեն մտել:

7. Պալատի խորհրդի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը.

Պալատի խորհուրդը գտնում է, որ փաստաբան Կրոմվել Գրիգորյանի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթը ենթակա է կարճման՝ հետևյալ պատճառաբանությամբ:

Օրենքի 39-րդ հոդվածի առաջին մասի համաձայն՝ փաստաբանը ենթակա է կարգապահական պատասխանատվության սույն օրենքի և փաստաբանի վարքագծի կանոնագրքի պահանջները խախտելու համար:

Կանոնագրքի 4.1 ենթակետի համաձայն՝ Փաստաբանը, ով ներկայանում է կամ մասնակցում է գործին դատարանի կամ արբիտրաժային տրիբունալի առջև, պետք է ենթարկվի այդ դատարանի կամ տրիբունալի գործունեությունը կարգավորող կանոններին, այդ թվում պետք է հարգանքով վերաբերվի դատավորին և/կամ դատավարության մյուս մասնակիցներին: Այդ կանոններին ենթարկվելու պարտականությունը չի սահմանափակում փաստաբանի՝ դատավորի, արբիտրի, կամ վարույթի այլ մասնակիցների գործողությունների դեմ առարկելու կամ այլ դատավարական իրավունքներից օգտվելու հնարավորությունը: Փաստաբանը դատարանի հանդեպ հարգանք դրսևորելու հետ միաժամանակ պետք է իր վստահորդի շահերը պաշտպանի անկաշկանդ և անվախ՝ հաշվի չառնելով իր անձնական շահերը:

Կանոնագրքի մեջբերված իրավադրույթից հետևում է, որ փաստաբանը վարելով իր վստահորդի գործը դատարանում կամ արբիտրաժային տրիբունալում, պարտավոր է

ենթարկվել այդ հաստատություններում վարքագծի ճանաճված, ընդունված և (կամ) ամրագրված կանոններին: Կանոնագրքի 4.1 ենթակետով նախատեսված նորմը նաև վկայակոչող է և հղում է պարունակում փաստաբանի և դատարանի հարաբերությունները կարգավորող այլ իրավական ակտի: Տվյալ դեպքում, հաշվի առնելով, որ խոսք է գնում քրեական գործի դատական քննության մասին, այդ իրավական ակտը ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքն է (**այսուհետ՝ նաև ՔԴՕ**):

ՔԴՕ-ի 73-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին մասի համաձայն՝ Պաշտպանը պարտավոր է՝ կասկածյալին և մեղադրյալին իրավաբանական օգնություն ցույց տալու համար ներկայանալ քրեական վարույթն իրականացնող մարմնի կանչով:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Դատարանի գրության մեջ փաստաբանի հակասող վարքագիծ է համարվել իր ներկայանալուն խոչընդոտող հարգելի պատճառների մասին գրավոր կամ բանավոր կերպով դատարանին չտեղեկացնելու արարքը, Պալատի խորհուրդը փաստաբան Կրոմվել Գրիգորյանի վարքագիծը քննության առարկա է դարձնում միայն այդ տեսակետից:

Քննարկելով Փաստաբանի վարքագիծը վերը նշված իրավական կարգավորումների համատեքստում՝ Խորհուրդն անհրաժեշտ է համարում պատասխանել հետևյալ հարցադրումներին.

1. արդյոք Փաստաբանը ԿԴ1/0047/01/19 քրեական գործով հանդիսանում է պաշտպան.
2. արդյոք Փաստաբանը ԿԴ1/0047/01/19 քրեական գործով դատական նիստերի ժամանակի և վայրի մասին պատշաճ ծանուցված է եղել.
3. արդյոք Փաստաբանը ԿԴ1/0047/01/19 քրեական գործով նշանակված դատական նիստերին չի ներկայացել.
4. արդյոք Փաստաբանը ԿԴ1/0047/01/19 քրեական գործով նշանակված դատական նիստերին իր ներկայանալուն խոչընդոտող հարգելի պատճառների մասին գրավոր կամ բանավոր կերպով դատարանին չի տեղեկացրել:

Պատասխանելով վերը թվարկված առաջին և երկրորդ հարցադրումներին՝ Խորհուրդն արձանագրում է, որ Փաստաբանը թիվ ԿԴ1/0047/01/19 քրեական գործով հանդիսացել է ամբաստանյալների պաշտպանը և պատշաճ ծանուցված է եղել թվով 3 դատական նիստերի մասին: Այս փաստերը համարվում են հաստատված, նաև հաշվի առնելով այն հանգամանքը, որ դրանք չեն վիճարկվել Փաստաբանի կողմից:

Փաստաբանն ընդունել է նաև վերը նշված երրորդ հարցադրումը, այն է՝ իր կողմից դատական նիստերին չներկայանալը համավարակով պայմանավորված պատճառներով:

Ինչ վերաբերում է չորրորդ հարցադրմանը, թե արդյոք Դիմումում թվարկված դատական նիստերին Փաստաբանը իր ներկայանալուն խոչընդոտող հարգելի պատճառների մասին գրավոր կամ բանավոր կերպով դատարանին չի տեղեկացրել,

ապա Փաստաբանի կողմից ներկայացվել է Kromvel@list.ru էլեկտրոնային փոստից դատական իշխանության պաշտոնական կայքում հրապարակված Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի դատավոր Վ. Ստեփանյանի v.stepanyan@court.am էլեկտրոնային փոստի հասցեին նախապես ուղարկված (22.06.2020թ.-ին, ժամը 11:38-ին, 16.07.2020թ.-ին, ժամը 09:15-ին և 25.08.2020թ.-ին, ժամը 11:51-ին) միջնորդություններ՝ 23.06.2020թ.-ին, ժամը 12:00-ին, 16.07.2020թ.-ին, ժամը 15:00-ին և 25.08.2020թ.-ին, ժամը 14:00-ին նշանակված դատական նիստերը հետաձգելու վերաբերյալ:

Կարգի 3.3.1 ենթակետը համաձայն՝ կողմերից յուրաքանչյուրը պետք է ապացուցի իր վկայակոչած փաստերը:

Կարգի 3.3.5 ենթակետը համաձայն՝ Եթե բոլոր ապացույցների հետազոտումից հետո վիճելի է մնում փաստի առկայությունը կամ բացակայությունը, ապա դրա բացասական հետևանքները կրում է այդ փաստի ապացուցման պարտականությունը կրող կողմը:

Խորհուրդն արձանագրում է, որ Փաստաբանը թիվ ԿԴ1/0047/01/19 քրեական գործով դատական իշխանության պաշտոնական կայքում հրապարակված Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի դատավոր Վ. Ստեփանյանի v.stepanyan@court.am էլեկտրոնային փոստի հասցեին նախապես ուղարկել է միջնորդություններ՝ դատական նիստերը հետաձգելու վերաբերյալ:

Հետևաբար իր ներկայանալուն խոչընդոտող պատճառների մասին գրավոր կերպով դատարանին տեղեկացրել է:

Դիմողը չի ներկայացրել հակառակը հիմնավորող որևէ ապացույց, ինչպես նաև չի առարկել Փաստաբանի կողմից միջնորդությունները նախապես ուղարկված լինելու փաստի վերաբերյալ, հետևաբար այս փաստը ևս համարվում է հաստատված:

Նկատի ունենալով վերոգրյալը, Խորհուրդը գտնում է, որ Փաստաբանի՝ Դատարանին իր բացակայության մասին չտեղեկացնելու վարքագիծը չի հաստատվել, հետևաբար Կրոմվել Գրիգորյանի վարքագծում առկա չէ «Փաստաբանության մասին» օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ կետի, Կանոնագրքի 4.1 կետի պահանջների խախտման հատկանիշներ:

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով «Փաստաբանության մասին» օրենքի 10-րդ հոդվածի, 39-րդ, 39.7 հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետի և 39.8 հոդվածների պահանջներով՝

Խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց՝

1. Փաստաբան Կրոմվել Գրիգորյանի (արտոնագիր՝ թիվ 305) նկատմամբ հարուցված կարգապահական վարույթը կարճել:

2. Հանձնարարել ՀՀ փաստաբանների պալատի աշխատակազմի ղեկավարին՝ սույն որոշման մասին իրազեկել Դիմողին և փաստաբան Կրոմվել Գրիգորյանին:

Ծանոթություն. Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում սույն կետով նախատեսված բողոքարկման ժամկետն անցնելուց հետո:

ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի
կարգապահական գործով
նիստը նախագահող՝

Կարապետ Աղաջանյան

**02 փետրվարի 2021թ.
թիվ ԿԳ/60-Ա
ք. Երևան**